65. ՊՍՏԻԿ ՏՂԻ ՌԸՍԿ

Կէղի, չէղի մե մարդ մի կէղի, ուրին տաս էրեխա։

Էդ մարդ կէրթա կաշխատի, էդ էրեխեքներու ռըսկ (ապրուստ) օրեն մեկ կուռուշ ա դրուկ։ Ամեն օր էդ մարդ կաշխատի, էլման էդ մարդուն ու էրեխեքներուն նասիրն էդ ա։

Կեսա.— Կնիկ, վալա, ֆլան աղի մոտ մեկ գործ մի բացվեր ա, օրական մեկ մաշիթա մարդու գունդուլիքն (օրավարձք) ա, ես պտի էրթամ առնիմ մեկ մաշիթա, բալքի ամեկուս էրկու ղուրուշ հ'իդա, առնինք ուտինք օր ապրինք։

Գնաց էդի էդ աղի մոտ աշխատեց, առեց ղմաշիթիեն ու էկավ։ Բերեց էդ մաշիթեն խուրդեց, առավ հաց, միս ու խսաբից (հաշվեց) օր էլման ամեկուն էկավ մեկ մեկ ղուրուշ։

Ըսավ.— Կնիկ, էդրմլա չէղնի, էրթանք մե հարուստ թագավորի մի քաղաք։

Էլան գացին Ինդլիզի խոզ։ Գացին էդ մարդ ուր էրեխեքներով էդ շուկի մեջ տեխ։ Էկան ղէտոնք ծեծեցին ու շուկից խանեցին։

Ըսավ.— Ա՜յ մարդ, թ'անոթի ինք, թե ծարավ ինք, մեր շուկի մեջտեխ կնստենք, մարդ ծեն չէներ, էկանք էստեխ հանդե չթորկին օր շուկի մեջտեխ նստինք ու պտտինք, օր տեխ էրթանք։

Էլավ էդ մարդ մառախ էրեց, ուր էրեխեք թոփեց ու տարավ պատի մը տակ դրեց քաղքեն դուս։

Ըսավ.— Դու էստեխ նստեք, ես էրթամ քաղքի մեջ, կանք փըշըմը կերակուլ չկերնա՞մ բերիմ ուտինք։

Էդ մարդն էլավ ու գնաց շուկեն։ Տեսավ օր տուն մի հանդե

մաշաթն ա, քառսուն հազար մանեթ քառսուն օրով, օր քառսուն օր թըմմավ, պետք ի էդ քառսուն հազար մանեթն իտա։ Իրեք կադ տներ, ամեն կադ տաս տաս հ'օդա ու էդ տեխ խոսք տվեց, խոսքն առավ ու դարձավ էկավ ուր կնկա խեչ։

Ըսավ.— Կնիկ, քալա, մի տուն մ'իմ առեր իմ, իրեք կադ, ամեկ կադ տաս, տաս հ'օդա։

Ըսավ.— Իրիկ, աստված քու տուն չակոլա, վըր մըզի քառսուն հազար օչիլ չկա, մենք քառսուն հազար մանեթ հ'ո՞ւստեն տանք, մենք հանդե անոթնեն կմեռնինք։

Ըսավ.— Կնիկ էլի էրթանք, եռսուն խինդ օր մեջ պառկինք, խինդ օր լէ օր մնաց կթորկինք ու կփախինք։

Ըսավ.— Իրի՛կ, դու դինաս։

Էլան առան ուրանց էրեխեք, էկան մտան իդա տներ։ Էդ մարդու կնիկ լէ էրեխով էր։ Մեկ քսան օր օր թըմավ, ընդոր կնիկ պառկավ ու տղե մի բերեց։

Էդ մարդ էլավ գնաց դուքներուց փըշըմը փրինձ ու եղ փարա էրեց (ժողվեց) ու բերեց ուր կնկան շուրվե մի էփա, մարդն աչքեց տեսավ օր փետ չկան օր շուրվե մի էփա, տաք տաք ուր կնիկն ուտա։

Էդ մարդ շատ շատ մըռոխավ մըջ ուր կաշուն, ըսավ. «Իմ կնկա տատմերութեն ես էրեցի, կարպետ չկա իմ կնկա տակ թալիմ, իմ կնիկ չոր տախտըկներու վրեն, խոտի մեշն ի պառկի, մեղա իմ աստծու, ես ի՞նչ մեխք ունիմ օր դու ընձի էղմլա կտանջիս»։

Էդ մարդն էլավ գնաց դռան հ'ետև պատի երեսն ի վեր տախտակմ էրկու պրծուց, տեսավ օր օսկին էն դիհեն պլավ ցածր ու էկավ։ Ջօսկին թոփեց, լցեց մեկ ջուլի մը մեջ ու տարավ դրեց կնկա հ'առեճ։

Կնիկն ըսավ.— Մա՛րդ, էդ ի՞նչ բան ա։

— Կնիկ,— ըսավ,— գացի դռան ետևից էրկու տախտակ պրծուցի օր բերի կրակ անի, քըզի շուրվե մի էփի, մեկ լէ տեսա, օսկին պլավ ու ցած էկավ։

Իդա հախս էդ մարդն էր էլավ գնաց ուր էրեխեսներու, ուրին ու ուր կնկան մեկ մեկ ծեռ յաթաղ (անկողին) առավ ու մեկ մեկ կարեռլա (մահճակալ)։ Ու բերեց ուր հ'օդեն իմալ օր էդ քաղաքացոց հ'օդեն շիքուկ էր, ուր հ'օդեն շիքեց։ Գնաց մեկ կնիկ լէ հախ տվեց բերեց դրեց ուր կնկա խեչ օր խըզմաթ էնա։

Վերջին էլավ ուրին լավ ծեռք մի հալավ տվեց կարել ու խաքավ շամշի (հովանոց) լէ ձեռքին առավ, գնաց փողան աղա մար-

դերաց հետ ման էկավ։ Ման գալով սորա, Գաբրիել խրիշտակ իշավ հ՚առեճն, կանավ, ըսավ.

— Մարդ, դու հ՚որի՞ քուրարեցեր իս իդմլա, ինչի ես չճանչը-նա՞մ դու իմալ մարդ իս,— ըսավ,— գնա կուրբան էղի էն թաժա մանուկին օր էկերի աշխար։ Խո օսկին էդ տախտկներու հետև լցուկ չէր, աստվածութեն էն նոր մանուկի գիր էնպես ա գրե, ընդրա ոըսկ շատ ա տվե,— ըսավ,— էլման դու էն քառսուն փա-րի տերն ի, քու կնկան ու էրեխեսներու ոըսկ էլման տաս ղուրու-շու ինչ օր էվելի կուտեք, ըդ պստիկ տղի ոըսկն է։

Մարդն տեսավ օր ուր կուշտ էլ մարդ չկար, ասեց. «Վոլա. էդի բարի խրիշտակն էրդ»։

Ու էլավ էդ մարդ դեսլի ուր տուն վազավ։

Ըսավ.— Կնի՛կ, մեր պստիկ տղին մուխաթ կեցիր, Գաբրել խրիշտակն էկավ իմ հ՚առեճ, ես չգինենք խրիշտակն էր, ընձի ըսավ թե՝ «Դու հ՚որի՞ էդմըլա քուրար, քուրար ման գիտաս քրդի, ես քըզի չճա՞նչնամ դու ինչ մարդ իս»։ Ես լէ ըսի, «Ես ի՞նչ մարդ իմ օր դու կճանչնաս»։ Ըսավ. «Դու էն մարդն իս օր քու ոըսկն ու քու էրեխեքներուն տաս ղուրուշ է,— ըսավ,— գնա, քենի էն նոր էլուկ էրեխեն սախ է, ընդոր սայից դուք կուտիք, կխմիք»։

Էկավ քառսուն օր թըմավ, էդ տան տեր էկավ ուր փարեն ուզեց, ըսավ.

— Իմ պահման ու քուն լմենցավ, պետք է օր դու իմ փարեն իտաս։

Է՚, չկա օսկի՞, էլավ բերեց քառսուն հազար մանեթ տվեց, էդ տան տեր շատ շնորհկլավ ու գնաց։

Նորեն էդ մարդ էդ թաժա տղի սայից էղավ լավ վաճառական մի ու մեջ տեխ կանավ։

Ինոնք խասան ուրանց մուրազին, դու լէ խասնիս քու մու-րազին։

Երկնուց իրեք խնձոր պատավ, մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ լէ գրողին։